

## ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

---

### ՀԱՃՈՅԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

*Բանասիր. գիտ. դոկտոր Լ. Գ. Բրուտյան*

**Հիմնաբառեր:** Հաճոյախոսություն, միջմշակութային հաղորդակցում, համատեքստ, խոսքային վարվելակարգ, խոսույթ:

Հաճոյախոսությունները որպես խոսքային վարվելակարգի ձևերից մեկը, որպես գրուցակցի հանդեպ բարեհամբույր և բարյացակամ վերաբերմունքի նշան, «սոցիալական շոյանքներ» (ըստ Ն. Ֆորմանովսկայայի<sup>1</sup>), միևնույն ժամանակ կատարում են կարևոր հաղորդակցային կապահաստատական գործառույթ: Այսօր այլևս ապացուցման կարիք չունի այն թեզը, համաձայն որի մեր կյանքի որակը պայմանավորված է մեր հաղորդակցման որակով: Մա էլ, իր հերթին, անմիջականորեն կապված է նրա հետ, թե որքանով տեղին և պատշաճ են կիրառվում ու մեկնաբանվում խոսողական ակտերը հաղորդակիցների կողմից՝ կախված բազմապիսի հանրամշակութային գործոններից: Խոսքային բազմազան ակտերի շարքում հաճոյախոսության խոսքային ակտը զբաղեցնում է իր ուրույն, չափազանց կարևոր տեղը: Հարկ է նշել, որ հաճոյախոսություն անելիս թե՛ միևնույն լեզվամշակութային և թե՛ առավել ևս միջմշակութային հաղորդակցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել բազմապիսի գործաբանական և հանրամշակութային գործոններ, որոնք ազդում են դրա ընկալման և, հետևապես, հաղորդակցային գործընթացի հետագա հաջողության կամ անհաջողության վրա: Հոդվածում ասվածի լույսի ներքո վերլուծվում են տարաբնույթ հաճոյախոսություններ:

---

<sup>1</sup> Н.И.Формановская, Речевой этикет и культура общения, М., 1989, էջ 52.

Իզական սեռի անձանց համեմատությունը արական սեռի անձանց հետ (օրինակ՝ «*Դու տղամարդ կին ես*», «*Դու տղամարդու խելք ունես*») հայկական և ռուսական լեզվամշակույթներում ընկալվում է որպես հաճոյախոսություն, թեպետ նշենք, որ կանանց մի մասը չի ընդունում նման հաճոյախոսություններ: Միննույն ժամանակ, հակառակը, այսինքն արական սեռի անձանց վարքագծի, բնավորության գծերի համեմատությունը իզական սեռի հետ (օրինակ՝ «*Դու կնոջ նման ես քեզ պահում*») ոչ միայն չի ընկալվում որպես հաճոյախոսություն, այլև կշտամբանք, բացասական գնահատական է պարունակում: Դրա հետ մեկտեղ հանդիպում են իզական սեռի անձանց վերաբերող արտահայտություններ և խոսույթներ, որտեղ զուգահեռաբար մատնանշվում են տղամարդուն և կնոջը հատուկ հատկանիշներ, և նման խոսույթներն ընկալվում են որպես հաճոյախոսություն: Այսպես, Պարույր Սևակը Սիլվա Կապուտիկյանի մասին գրել է, որ ծնողները և բնությունը օժտել են նրան կանացի և առնական գծերի հրաշալի և հազվադեպ համաձուլվածքով. նրա հոգին կանացի քնքշությամբ է պատված, իսկ սիրտը բաբախում է ուժեղ, տղամարդու սրտի նման, նրա ձայնը մեղմ է հնչում՝ կնոջ նուրբ ձայնի պես և միննույն ժամանակ տղամարդու ուժեղ շեշտադրությամբ, նրա խոսքում լսվում են մայրական մեղմ հնչերանգներ և հայրական ազդեցիկ, տիրական և հպարտ հնչյուններ, նա լաց է լինում կնոջ պես և ոգևորում ուժեղ տղամարդու նման, նրա ներքին հոգևոր կյանքը լի է հայուհուն բնորոշ խոնարհությամբ և հայի անհանգիստ որոնումներով: Հմմտ. «*երկաթե լեղի*» որակումը, որը տրվել է Մարգարետ Թետչերին:

Ինչ վերաբերում է հաճոյախոսական խոսույթում գնահատողական բառապաշարին գեղերային տարբերակումների տեսակետից, ապա նախ՝ իզական սեռի անձինք օգտագործում են ավելի հարուստ և բազմազան բառապաշար և, բացի դրանից, օգտագործում են այն տարբերակված կերպով՝ կախված իրադրության համատեքստից: Այսպես, «*գեղեցիկ*» բառը ավելի հաճախ օգտագործում են հանրամշակութային իրությունները գնահատելու համատեքստ-

տում («Ի՛նչ գեղեցիկ տուն է», «Ի՛նչ գեղեցիկ մեքենա է») և հազվադեպ՝ արտաքինը, հագուկապը գնահատելիս, կիրառելով բազմազան նրբերանգներ մատնանշող մակդիրներ («սիրունիկ», «հմայիչ», «հետաքրքիր», «ոճային» և այլն<sup>2</sup>):

Դիտարկենք այժմ **Ֆիտոնիմներ (բուսանուններ) պարունակող** հաճոյախոսությունները: Եթե հայերը երիտասարդ սլացիկ աղջկան համեմատում են չինարի, բարդու հետ, ապա ռուսական լեզվամշակույթում լավ հաճոյախոսություն է երիտասարդ աղջկան, կնոջը համեմատել կեչու հետ («*Շու կեչու նման սլացիկ ես*»): Կեչին, ինչպես հայտնի է, Ռուսաստանի խորհրդանիշներից մեկն է, և պատահական չէ, որ արտերկրում Ռուսաստանի ապրանքանշաններից մեկը «Բերյոզկա» հայտնի պարային համույթն է, որի մասնակիցները սլացիկ երիտասարդ ռուս գեղեցկուհիներ են: Ի դեպ, Լիտվայում կնոջը կեչու հետ չեն համեմատում, քանի որ «*կեչի*» բառը լիտվերենում արական սեռի է:

Հայկական, ռուսական, անգլիական և շատ այլ լեզվամշակույթներում երիտասարդ կնոջը, աղջկան հասցեագրված տարածված հաճոյախոսություն է նրան համեմատել ծաղիկների թագուհու՝ վարդի հետ. «*վարդ*» բառը զուգորդություններ է առաջացնում ամենագեղեցիկի, ամենալավ հատկանիշների, ինչպես և երիտասարդության հետ: Ի դեպ, «*վարդ աղջիկ*» արտահայտությունը հենց «գեղեցիկ» նշանակությունն ունի<sup>3</sup>:

Երիտասարդ կանանց հասցեագրված համընդհանուր, ընդունված հաճոյախոսություններ են շատ տարբեր լեզվամշակույթներում «*ծաղիկ*» բառը պարունակող հաճոյախոսությունները. «*Շու իսկական ծաղիկ ես*»: Իսկ ահա մի օրինակ, որը կարող է հանգեցնել միջմշակութային բախման. եթե ռուսերենում «*Он выглядит как огурчик*» կարող է օգտագործվել որպես հաճոյախոսություն «առողջ, թարմ, պիրկ» նշանակությամբ, ապա հայերենում (խոսակ-

<sup>2</sup> Տե՛ս *Л.Г.Брутян, Язык и гендер*, Ереван, 2008, էջ 82:

<sup>3</sup> Տե՛ս նաև *Р.Р.Грдзелян, Слово в ореоле смысла*, Ереван, 2007, էջ 74-75:

ցական ոճում) «*խիարի պես*» արտահայտությունը, ինչպես հայտնի է, նշանակում է «լինել հիմար»:

Անցնենք գունանուններ պարունակող հաճոյախոսություններին, որոնք հաճախ տարբեր կերպ են ընկալվում տարբեր մշակույթներում: Հայտնի է, որ «*սպիտակ*» ածականը պարունակող արտահայտությունները շատ լեզուներում ունեն դրական հարանշանակություններ: Օրինակ, «*Դու սպիտակ մարդ ես*» արտահայտությունը մատնանշում է պարկեշտություն, ազնվություն, բարեկրթություն, սակայն ասիական երկրներում, որտեղ սպիտակ գույնը, ինչպես հայտնի է, ասոցացվում է սգո հետ, բացասական հարանշանակությունների հետ, նման հաճոյախոսությունները անհնարին են: Չինաստանում, օրինակ, «*Դու սպիտակ մարդ ես*» ամենևին հաճոյախոսություն չէ, այլ նշանակում է 1) “անգրագետ, հասարակ (բառի նվաստական իմաստով) մարդ”, 2) “ապուշ”<sup>4</sup>: «*Ի՛նչ սպիտակամաշկ ես*» արտահայտությունն ընկալվում է որպես հաճոյախոսություն հիմնականում թուխ հայերի շրջանում, այնինչ սլավոնական ժողովուրդների մոտ, որոնք մեծամասամբ բաց գույնի մաշկ ունեն, նման արտահայտությունը չունի հաճոյախոսության ուժ: «*Որքա՛ն գեղեցիկ են որդուդ կապույտ աչքերը*» լավ հաճոյախոսություն է, օրինակ, սլավոնական ազգությունների անձանց համար, սակայն այդ նույն արտահայտությունը կարող է տարակուսանք և անգամ մշակութային շոկ առաջացնել արաբական աշխարհի ներկայացուցիչների մոտ: Դրա պատճառն այն է, որ աչքերի կապույտ գույնը արաբներն ընկալում են որպես վատ մարդու, նաև խաբեության և խարդավանքի նշան: Բացի այդ, պատմականորեն հենց «կապուտաչյա» մարդիկ են եղել արաբների հիմնական հակառակորդները<sup>5</sup>: «*Ինչպիսի՛ կանաչ աչքեր ունես*» ասույթը նույնպես ոչ բոլոր լեզվամշակույթներում է ընկալվում որպես հաճոյախոսություն: Ինչպես Ս. Գ. Տեր-Մինասովան է նշում, ռուսերեն «*зеленые глаза*» («*կանաչ աչքեր*») արտահայտությունը բանաստեղ-

<sup>4</sup> Տե՛ս *С.Г. Тер-Минасова, Война и мир языков и культур, М., 2008, էջ 159:*

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 56:

ծական, ռոմանտիկ հնչեղություն ունի և հուշում է կախարդական, ջրահարսի աչքերի մասին: Այնինչ անգլերեն նույն *“green eyes”* բառակապակցությունը նախանձի փոխաբերական արտահայտությունն է, բացասական հարանշանակություն ունեցող մի արտահայտություն: Բացասական գուգորդությունները Շեքսպիրի «մեղքն են», որը «Օթելլո»-ում նախանձը, խանդը անվանել է *“a green-eyed monster”* («կանաչաչա հրեշ»)<sup>6</sup>: Հետևապես, «կանաչ աչքեր» արտահայտությունը տարբեր լեզվամշակույթներում (մասնավորապես, ռուսական և անգլիական) կարող է հանգեցնել մշակութային բախման: Նշենք նաև «*ոսկե*» գունանունը, որը տարբեր խոսույթներում օգտագործվում է որպես հաճոյախոսություն. «*Դու ոսկե ձեռքեր (սիրտ) ունես*»:

Դիտարկենք կենդանանիշ բառեր պարունակող հաճոյախոսությունները միջմշակութային հաղորդակցման համատեքստում: Քանի որ միևնույն կենդանանիշ բառն արտացոլում է այս կամ այն լեզվամշակույթի լեզվակիրների աշխարհընկալման առանձնահատկությունները, նման հաճոյախոսությունները տարբեր կերպ են ընկալվում և մեկնաբանվում տարբեր լեզուներում. հաճախ այն, ինչ հաճոյախոսություն է համարվում մեկ մշակութային, կարող է միանգամայն անհասկանալի, նույնիսկ վիրավորական լինել մեկ ուրիշում: Ըստ Ի. Ն. Գորելովի և Կ. Ֆ. Սեդովի՝ «այլ մշակույթի կրողների վրա շատ տարօրինակ տպավորություն կարող են թողնել կանանց հասցեին արվող որոշ հաճոյախոսություններ: Հնդկաստանում կնոջը կարելի է հաճոյանալ՝ նրան համեմատելով կովի հետ, իսկ նրա քայլվածքը՝ փղի քայլվածքի հետ»<sup>7</sup>: Ստորև բերենք միջմշակութային բախման մի օրինակ: Հնդիկ ուսանողները իրենց ռուս դասախոսին մի անգամ ասացին. «*Դուք փղի պես եք քայլում*»: Ռուս կինը, որի համար փղի քայլվածքը գուգորդություններ է առաջացնում ծանրության, անճոռնի քայլվածքի հետ, խիստ վիրավորվել էր, այնինչ ուսանողները իրեն հաճոյախոսել էին,

<sup>6</sup> С.Г.Тер-Минасова, Язык и межкультурная коммуникация, М., 2008, էջ 53-54:

<sup>7</sup> И.Н.Горелов, К.Ф.Седов, Основы психолингвистики, М., 2005, էջ 132.

նկատի ունենալով փղի քայլվածքի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են սահունությունը, սեփական արժանապատվությունը, ինքնավստահությունը<sup>8</sup>:

Հայկական և ռուսական մշակույթներում ոչխարը դրական զգացմունքներ և զուգորդություններ ամեննին չի առաջացնում, քանի որ ընկալվում է որպես բթության, նախիրի հետևից տխմարաբար և հնազանդորեն հետևող: Հետևապես, նշված լեզվամշակույթներում մարդուն «ոչխար» անվանելը վիրավորանք է և ոչ թե հաճոյախոսություն: Այնինչ Չինաստանում մարդուն, սովորաբար կնոջը, այդպես անվանելը լավ հաճոյախոսություն է, քանի որ չինական մշակույթում, հետևապես, լեզվում այդ կենդանին գեղեցկության և կատարելության խորհրդանիշ է, այն մարմնավորում է լավագույն առաքինությունները. բարությունը, համեստությունը, անձնուրացությունը, կոլեկտիվիզմը<sup>9</sup>:

Օձը թե՛ հայկական, թե՛ ռուսական լեզվամտածողության համար «խայթող», «կծու», «թունոտ» հատկանիշների մարմնավորում է («Նա օձ է», ասում ենք), թեև բառն ունի նաև դրական հարանշանակություններ («Օձի խելք ունենալ»): Իսկ ճապոնիայում, ուր օձը մարմնավորում է միայն դրական հատկանիշներ, այդ թվում նրբագեղություն, նրբաճաշակություն, կնոջն հասցեագրված լավ հաճոյախոսություն է համեմատությունը օձի հետ. «գեղեցկուհի օձ»: Ռուսական մշակույթում «Гусыня» («սագ») դիմելաձևը վիրավորանք է կնոջ համար: Եզիպտոսում դա քնքուշ հաճոյախոսություն է<sup>10</sup>:

«Սոխակի պես ես երգում» տարածված հաճոյախոսություն է շատ լեզվամշակույթներում, այդ թվում հայկական և ռուսական, և պատահական չէ, որ հայ մեծ երգչուհի Գոհար Գասպարյանին անվանել են «հայկական սոխակ»: «Ի՛նչ ծիտ ես» հայ երիտասարդների

<sup>8</sup> Տե՛ս *Д.Б.Гудков*, Теория и практика межкультурной коммуникации, М., 2003, էջ 147:

<sup>9</sup> Տե՛ս *С.Г.Тер-Минасова*, Война и мир языков и культур, էջ 152:

<sup>10</sup> *И.Н.Горелов, К.Ф.Седов*, նշվ. աշխ., էջ 132:

Ժարգոնում ընդունված հաճոյախոսություն է՝ հասցեագրված երիտասարդ աղջկան, կնոջը: Այն, սակայն, կարող է չընկալվել որպես այդպիսին այլ լեզվամշակույթներում: Հայաստանում տղամարդու համար հաճոյախոսություն կարող է լինել նրան առյուծի, արծվի հետ համեմատելը: Երեխային փաղաքշորեն անվանում են գառնուկ, իսկ ջեյրանի հետ համեմատությունը հաճոյախոսություն է կնոջը:

Շատ լեզվամշակույթներում որպես հաճոյախոսություն օգտագործվում են համեմատությունները երկնային մարմիններին, մասնավորապես, արևի հետ: «*Голь арлеку*» գովասանական խոսքերը ուղղված են լինում իր շուրջը լույս սփռող մարդուն հայկական, ռուսական և մի շարք այլ լեզվամշակույթներում: Սակայն միջինասիական և այն երկրներում, որտեղ կիզիչ արևը տարվա շոգ եղանակին չափազանց մեծ անհարմարություններ է բերում, հաճոյախոսություններում օգտագործվում է համեմատություն ոչ թե արևի, այլ լուսնի հետ: Ուզբեկ գրող Տիմուր Պուլատովը հետևյալ կերպ է խոսում տարբեր լեզուներում «*արև*» բառի հուզարտահայտչական երանգավորման, պատկերավորության մասին. «Ռուսերեն «արևը» («солнце») բոլորովին այն չէ, ինչ ուզբեկերեն «кыям»-ը և միանգամայն այլ է, ինչ տաջիկերեն «офтоб»-ը: Ինչպիսի հարաբերությունների՝ ընկերական կամ կաշկանդող, մեջ էր մտնում մարդը երկնային լուսատուների հետ, այդպես էլ դրանք արտահայտել ու արտաբերել է լեզուն: Չէ՞ որ կյանքի մեծ մասը արևի այրող ճառագայթների տակ ապրած ուզբեկը երբեք չի ասի փաղաքշական «солнышко», ճիշտ այնպես, ինչպես ռուս մարդը չի ունենա այնպիսի զգացողություն, որ արևը կարող է լինել ոչ միայն պտղաբեր և հողին նոր կյանք տվող, այլև թշնամական: Փոխարենը լուսնի՝ գիշերային այդ լուսատուի նկատմամբ, որը զովություն ու հանգստություն է բերում, ուզբեկը բոլորովին այլ վերաբերմունք ունի. գեղեցիկ ու ցանկալի ամեն բան նա կոչում է *լուսնադեմ*, *լուսնանման*՝ այն էլ

այնպիսի առողջանությանը, որ ռուս մարդու ականջին դա առնվազն վերամբարձ կթվա»<sup>11</sup>:

Հաճոյախոսական խոսույթը կարող է տարբեր լեզվամշակույթներում ընկալվել տարբեր ձևով՝ կախված միևնույն հասկացության հանրամշակութային տարբեր ընկալումներից, համարժեք նշանակությամբ բառերի տարբերակումներից: Այսպես, հայկական և ռուսական լեզվամտածողության համար ընկերությունը, բարեկամությունը կարևորագույն արժեքներից է, որը ենթադրում է չափազանց խորը կապ և նվիրվածություն, այնինչ ամերիկացիների մոտ ընկերության, ընկերոջ հանդեպ վերաբերմունքն այլ է. այն չի ենթադրում մեծ և խորը կապվածություն և անգամ զոհաբերություն: Դա է պատճառը, որ «*Ռու լավ ընկեր էս*» խոսույթը՝ արտաբերված հայի կամ ռուսի կողմից համարժեք չէ այդպիսի հաճոյախոսությանը, որը հնչում է ամերիկացու կողմից:

«*Ինչքան խելոք էս*» հաճոյախոսությունը՝ հասցեագրված հային, ռուսին, եվրոպացուն ենթադրում է, նախևառաջ, ինտելեկտ, խելք, գիտելիքներ, կրթվածություն հնարավոր ձախորդության, մարդկանց հետ շփման անկարողության հետ մեկտեղ: Մինչդեռ ամերիկյան մշակույթների մեծ մասում խելքը, խելացի լինելը ենթադրում է հաջողակ լինելը, ընդ որում, առաջին հերթին սոցիալական հարաբերություններում, մարդկանց լավ ճանաչելը, նրանց հետ ընդհանուր լեզու գտնելը: Ճապոնացիների համար ինտելեկտի կարևորագույն չափանիշ են համարվում սոցիալական ունակությունները: Չինացիների կարծիքով, խելացի մարդը սոցիալական կողմնորոշում ունեցող, գործունյա և պատասխանատու մարդն է: «Ինտելեկտ, խելք» հասկացությունը վերջինների մոտ ենթադրում է զգուշավորություն, հետևելու, դիտարկելու և ընդօրինակելու ունակություն: Նրանք կասկածանքով են վերաբերվում նորը ճանաչելու հակվածություն ունեցող, հետաքրքրասեր և քննադատորեն տրամադրված մարդու մտավոր ունակություններին<sup>12</sup>:

<sup>11</sup> Тимур Пулатов, Язык, автор, жизнь//Литературное обозрение, 1976, в. 8, էջ 109:

<sup>12</sup> См. С.Г.Тер-Минасова, Война и мир языков и культур, էջ 56-57:

Հարստությունը Արևմուտքում (մանավանդ, ԱՄՆ-ում) և, օրինակ, Հայաստանում և Ռուսաստանում տարբեր կերպ է ընկալվում: Եթե ամերիկացիների համար հարուստ լինելը նշանակում է հաջողակ լինել (ինչն այնտեղ ամենագլխավոր արժեքն է), լինել խելացի, ապա հայերի, ռուսների համար հարուստ լինելը նշանակում է լինել անազնիվ, խարդախ, ազահ: Հետևապես, *«Դու մեծ հարստություն ես ձեռք բերել»*, *«Որքա՛ն հարուստ տուն ունես»* արտահայտությունները հաճոյախոսություններ են Արևմուտքում, ԱՄՆ-ում, սակայն ոչ նշված երկրներում: Եվս մեկ օրինակ. *«Ես հիանում եմ քեզանով. դու այնքան համեստ ես»* ասույթը հաճոյախոսություն է կոլեկտիվիստական հասարակություններում, որտեղ համեստությունը չափազանց գովելի հատկություն է, որտեղ ընդունված չէ ի ցույց դնել սեփական արժանիքները և խոսել սեփական հաջողությունների մասին: Ի հակադրություն դրան, անհատապաշտական հասարակություններում դրանք ամենևին գովասանքի խոսքեր չեն, քանի որ, ինչպես հայտնի է, այնտեղ ընդունված բան է խոսել սեփական արժանիքների, ձեռքբերումների, հաջողությունների մասին, «վաճառել իրենց»: Պետք է նկատել, այնուամենայնիվ, որ այսօր կոլեկտիվիստական հասարակություններում դիտվում է համեստության ընկալման և գնահատման փոփոխություն գլոբալացման երևույթի ազդեցությամբ: Եվ այնտեղ արդեն բավականին հաճախ երիտասարդների հաղորդակցային վարքագծում հանդիպում է համեստության բացասական գնահատական:

Ամփոփելով, եզրակացնենք, որ միմիայն բազմապիսի գործաբանական և հանրամշակութային գործոնների հաշվարկումով կարելի է խոսել արդյունավետ հաճոյախոսության մասին, որը կարող է ճիշտ ընկալվել հասցեատիրոջ կողմից, ինչը, իր հերթին, կարող է նպաստել ներդաշնակ միջմշակութային հաղորդակցմանը:

**Ключевые слова:** комплимент, межкультурная коммуникация, контекст, речевой этикет, дискурс.

**Брутян Л.Г. - Compliments in the Context of Intercultural Communication.** - В статье анализируются разные типы комплиментов, являющихся одним из видов речевого этикета и выполняющих одновременно важную коммуникативную контактоустанавливающую функцию. Показывается, что при межкультурной коммуникации необходим учёт разнообразных прагма-и-социокультурных факторов, влияющих на адекватное восприятие комплиментов и, как следствие, успешность/неуспешность процесса коммуникации.

**Keywords:** compliment, intercultural communication, context, verbal etiquette, discourse.

**Brutian L. G. - Compliments in the Context of Intercultural Communication.** - In the paper, different types of compliments, one of the kinds of speech etiquette which have at the same time an important communicative contact-establishing function, are analysed. It is shown that in the process of intercultural communication it is necessary to take into account various pragma- and sociocultural factors that affect the adequate perception of compliments, hence, the success/failure of the communication process.